

## **ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ**

### **ԱՐԱՄ ԱՌԱՋԵԼՅԱՆ**

Եղանակագիտության մեջ  
մարենապիկական մոդելավորման  
ամրիտի վարիչ  
տեխնիկական զիտուրյունների  
դրկառք, պրաֆեսոր

### **ԳԱՅԱՆԵ ԲԱՐՄԵՂՅԱՆ**

ՀՀ կենարունական բանկի  
անտեսագետ,  
Եղանակագիր

### **ՕՊՏԻՄԱԼ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ: ՍՈԴԵԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ**

Ավանդների արժութային կազմն օպտիմալացնող անհատի համար վարքի նողել կառուցելիս կարելի է առանձ նացնել մի շարք դրդապատճառներ (նոտիվներ): Որոշում կայացնելով ավանդները տարրեր արժույթներուն տեղաբաշխելու մասին՝ տնտեսական գործակալը հիմնականում առաջնորդվում է հետևյալ նպատակներից որևէ մեկով:

1. *Կուտակված միջոցներից առավելագույն եկամտի ստացում:* Հաշվի է առնվազն տարրեր արժույթներով ավանդների եկամտարերության ցուցանիշը:

2. *Sրամսակցիոն (գործարքային) ծախսերի մինիմալացում:* Դրանական միջոցները պահելով տարրեր արժույթներով ավանդային հաշիվներուն հնարավորինս նվազեցվում էն ծախսերը՝ կապված արժույթների փոխարկման հետ, երբ որոշ ապրանքներ ու ծառայություններ գնվում են միայն որոշակի արժույթով (օրինակ՝ արտերկիր հաճախակի ճանփորդությունների դեպքում):

3. *Ոլոկերի մինիմալացում:* Հիմնական նպատակը դրանական միջոցների հուսափ պահպանությունն է: Առաջին պլան են նղվում ավանդի արժույթի հուսալիուրյունը և կայունությունը որոշակի ժամանակահատվածում: Եկամտարերության պարամետրերն այլևս որոշչի չեն. մարդիկ առաջին հերթին հետաքրքրված են պորտֆելի (փարերի) բազմազանեցմանը և հարաբերականորեն կայուն արժույթներում ներդրումներով:

Այսպիսով՝ առաջնորդվելով վերը թվարկված նպատակներով, մարդիկ ձևավորում են տարրեր արժույթներից բաղկացած ավանդային պորտֆել:

Ավանդների բազմազանեցումը տարրեր արժույթների միջև հետևում է նաև CAPM բազային նողելից: Եթե տնային տնտեսության տեսանկյունից հնարավոր է ներդնել միջոցները տարրեր արժույթներով ավանդներում,

ապա, ըստ էության, կան գննան համար հասանելի մի քանի ռիսկային ակտիվներ: Թեև դրանք դեպոզիտներ են՝ նախապես պայմանավորված տողակուադրույքով, այնուամենայնիվ, ըստ էության, ռիսկային ակտիվներ են, քանի որ վերջնական իրական գնողունակությունը կախված է գնաճի մակարդակից և փոխարժեքից, որոնք, տնտեսական գործակալի տեսանկյունից, պատահական մեծություններ են: Համադրելով տարբեր արժույթներից բաղկացած տարբեր կշիռներով ավանդները՝ կարելի է կառուցել տնտեսական գործակալի ընտրության համար հասանելի ակտիվների բույլատրելի բազմություն: Տրված բազմության վրա մաքսիմալացնելով օգտակարությունը, որը որոշվում է ռիսկի հանդեպ անհատի վերաբերմունքից, յուրաքանչյուր ներդրող կորոշի իր համար օպտիմալ պորտֆել, այսինքն՝ տարբեր արժույթներում ներդրումների օպտիմալ համադրություն:

**Օպտիմալ պորտֆելի ընտրության մոդել:** Անհատի խնդիրն է կատարել ակտիվների օպտիմալ պորտֆելի ընտրություն, ընդ որում, որպես ակտիվ պատկերացնելով բանկային հաշվում տարբեր արժույթներով պահպող ավանդները:

Խնդրի լուծման համար ներմուծենք փողի ծառայությունների ֆունկցիան (money service function): Տվյալ ֆունկցիան կախված է յուրաքանչյուր տեսակի արժույթի ծավալից, որը սպառողը կստանա ավանդի գործողության ժամկետի ավարտից հետո: Դա ցույց է տալիս, թե ինչպես են գործողության ժամկետի ավարտին ազգային արժույթով և արտարժույթով ավանդները փողից անմիջականորեն ձևափոխվում ծառայությունների (ընդհանրապես մարդիկ փող պահում են ոչ թե դրա ունեցած ներքին արժեքի համար, որը բղբադրամների դեպքում գրեթե գրոյի է հավասար, այլ այն ծառայությունների համար, որը մատուցում է փողը):

Անհատի խնդիրը հետևյալում է. մաքսիմալացնել փողի ծառայությունների ֆունկցիայի արժեքը բյուջետային սահմանափակման դեպքում: Բյուջետային սահմանափակմամբ տրվում է ավանդների պորտֆելի բույլատրելի կառուցվածքը: Նշենք, որ անհատի խնդիրը՝ որքան գումար պահել ավանդների տեսքով և ինչպիսի ժամկետայնությամբ, տվյալ մոդելի շրջանակներից դուրս է մնում՝ համարվելով նախապես տրված:

Որպես նապատակային դիտարկենք հաստատուն փոխարինման առաձգականությամբ<sup>1</sup> հետևյալ ֆունկցիան.

$$\frac{MS_{t+j}}{P_{d,t+j}} = \left( \alpha_1 \left( \frac{(1+i_d)^j D_d}{P_{d,t+j}} \right)^\rho + \alpha_2 \left( \frac{(1+i_f)^j D_f}{P_{f,t+j}} \right)^\rho \right)^{\frac{1}{\rho}}$$

որտեղ՝  $j$ -ն ավանդի ժամկետն է,  $MS_{t+j}$ -ն՝ փողի ծառայությունների (money service) մակարդակը ( $t+j$ ) պահին,  $D_d$ ,  $D_f$ -ը, համապատասխանաբար՝ ազգային և արտասահմանյան արժույթներով ավանդները,  $P_{d,t}$  և  $P_{f,t}$ -ն՝  $t$ -պահին գների ինդեքսները ազգային տնտեսությունում և արտ-

<sup>1</sup> Constant elasticity of substitution (CES)

Երկրում՝ արտահայտված համապատասխան արժույթով,  $i_d$ -ն և  $i_f$ -ը, համապատասխանաբար՝ ազգային արժույթով և արտաքինական արժույթով ներդրումների տոկոսադրույթները,  $\alpha_1$  և  $\alpha_2$ -ը՝ կշիռները, որոնք արտահայտում են համեմատական արդյունավետություն:

$$\text{Եթե } \eta_{\text{նդր}} = \eta_{\text{անդր}}, \text{ որ } i_d = i_f, \text{ ապա } \alpha_1 = \alpha_2 = \frac{P_d}{P_f},$$

ապա փողի ծառայությունների ֆունկցիան կստանա հետևյալ տեսքը.

$$MS_{t+j} = \left( \alpha_1 \left( (1+i_d)^j D_d \right)^\rho + \alpha_2 \left( (1+i_f)^j D_f e_{t+j} \right)^\rho \right)^{\frac{1}{\rho}}$$

Վերլուծության պարզության համար ենթադրել ենք, որ սպառողները, լուծելով պորտֆելի կառուցվածքի վերաբերյալ խնդիրը, արդեն իսկ որոշել են՝ որքան գումար պետք է պահել բանկում որպես ավանդ ( $D_0$ ): Այսինքն՝ օպտիմալացման խնդրի լուծմամբ կորոշվի, թե նախապես որպես խնդյություն պահպող միջոցներն ինչպես բաշխել ազգային արժույթի և արտաքինական միջության մեջ:

Տնային տնտեսության բյուջետային սահմանափակումը՝  $t$ -ավահին ունի հետևյալ տեսքը՝  $\frac{D_0}{P_{d,t}} = \frac{D_d}{P_{d,t}} + \frac{D_f}{P_{f,t}}$ : Հաշվի առնելով գնողունակության համարժեքը՝ հավասարությունը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով.

$$D_0 = D_d + e_t D_f$$

Անհատը մաքսիմալացնում է ավանդի գործողության ժամկետի ավարտից հետո ակնկալվող գումարից ստացվող օգտակարությունը: Փողի ծառայությունների ֆունկցիայից կարելի է նկատել նաև, որ դա արտահայտում է տարբեր արժույթներով գումարների օգտագործումից ծագող տրանսակցիոն ծախսերը, այսինքն՝ ավանդի ժամկետի ավարտից հետո կամ ժամկետից շուտ ավանդային հաշվի փակման դեպքում ունեցած գումարն ինչպիսի արդյունավետությամբ կսպասարկի գործարքները ( $\rho$ ,  $\alpha_1$  և  $\alpha_2$ ): Ուստի կարելի է պնդել, որ նշված ֆունկցիայի մաքսիմալացմամբ անհատը հաշվի է առնում ոչ միայն տարբեր արժույթներով ավանդների նկամտաբերությունը, այլև ավանդում առկա գումարի օգտագործման դեպքում ծագող տրանսակցիոն ծախսերը:

Այսպիսով՝ անհատի խնդիրն է մաքսիմալացնել օգտակարությունը.

$$MS_{t+j} = \left( \alpha_1 \left( (1+i_d)^j D_d \right)^\rho + \alpha_2 \left( (1+i_f)^j D_f e_{t+j} \right)^\rho \right)^{\frac{1}{\rho}}$$

հետևյալ բյուջետային սահմանափակման պայմաններում.

$$D_d + e_t D_f = D_0$$

Խնդրի լուծման նպատակով կառուցենք Լագրանժի ֆունկցիան.

$$L = \left( \alpha_1 \left( (1+i_d)^j D_d \right)^\rho + \alpha_2 \left( (1+i_f)^j D_f e_{t+j} \right)^\rho \right)^{\frac{1}{\rho}} + \lambda (D_0 - D_d - e_t D_f)$$

Մաքսիմումի անհրաժեշտ պայմաններն են<sup>2</sup>.

$$\frac{\partial L}{\partial D_d} = \left( \alpha_1 ((1+i_d)^j D_d)^\rho + \alpha_2 ((1+i_f)^j D_f e_{t+j})^\rho \right)^{\frac{1-\rho}{\rho}} \alpha_1 \rho (1+i_d)^{\rho j} D_d^{\rho-1} - \lambda = 0$$

$$\frac{\partial L}{\partial D_f} = \left( \alpha_1 ((1+i_d)^j D_d)^\rho + \alpha_2 ((1+i_f)^j D_f e_{t+j})^\rho \right)^{\frac{1-\rho}{\rho}} \alpha_2 \rho (1+i_f)^{\rho j} D_f^{\rho-1} e_{t+j}^\rho - \lambda e_t = 0$$

$$\frac{\partial L}{\partial \lambda} = D_0 - D_d - e_t D_f = 0$$

Առաջին երկու հավասարումների որոշ պարզ ձևափոխություններից հետո կունենանք.

$$\frac{D_d}{D_f} = \left( \frac{\alpha_1}{\alpha_2} \right)^{\frac{1}{1-\rho}} \left( \frac{e_t}{e_{t+j}^\rho} \right)^{\frac{1}{1-\rho}} \left( \frac{1+i_d}{1+i_f} \right)^{\frac{\rho}{1-\rho} j}$$

Հավասարության ձախ կողմում ազգային արժույթով և արտարժույթով դեպոզիտների հարաբերությունը բերելով միևնույն արժույթի՝ կստանանք.

$$\frac{D_d}{e_t D_f} = \left( \frac{\alpha_1}{\alpha_2} \right)^{\frac{1}{1-\rho}} \left( \frac{e_{t+j}}{e_t} \right)^{-\frac{\rho}{1-\rho}} \left( \frac{1+i_d}{1+i_f} \right)^{\frac{\rho}{1-\rho} j}$$

Հավասարության երկու կողմը լոգարիթմելով՝ կունենանք.

$$\ln \left( \frac{D_d}{e_t D_f} \right) = \frac{1}{1-\rho} \ln \left( \frac{\alpha_1}{\alpha_2} \right) - \frac{\rho}{1-\rho} \ln \left( \frac{e_{t+j}}{e_t} \right) + \frac{\rho}{1-\rho} j \ln \left( \frac{1+i_d}{1+i_f} \right)$$

Այսպիսվ՝ ազգային արժույթով ավանդները արտարժույթով ավանդների համեմատությամբ կամեն, եթե ազգային արժույթով ավանդների համար առաջարկվող տոկոսադրույթը գերազանցի արտարժույթով ավանդների տոկոսադրույթը  $\frac{1+i_d}{1+i_f} \uparrow \Rightarrow \frac{D_d}{e_t D_f} \uparrow$ , իհարկե, այն ենթադրությամբ, որ

երկու ավանդներում ներդրումներն ունեն միևնույն ռիսկայնությունը:

Հաջորդ եզրակացությունն այն է, որ ազգային արժույթով ավանդները արտարժույթով ավանդների համեմատությամբ կնվազեն, եթե ազգային

արժույթը արժեզրկվի՝  $\frac{e_{t+j}}{e_t} \uparrow \Rightarrow \frac{D_d}{e_t D_f} \downarrow$ : Ներքին տնտեսությունում ազգային արժույթը արժեզրկման բացասական սպասումները կհանգեցնեն ազգային արժույթով ավանդների տեսակարար կշռի կրճատման:

---

<sup>2</sup> Բավարար պայմանների ստուգման անհրաժեշտություն չկա, քանի որ նպատակային ֆունկցիայի գոգավոր լինելուց բխում է, որ անհրաժեշտ պայմանները տվյալ դեպքում նաև բավարար են:


**Հիստերեզիսի\*** ազդեցությունը ավանդների արժութային կազմի վրա: Հիստերեզիսն էլեմենտրիկ մոդելներում սովորաբար հաշվի է առնվում արգելանիվի փոփոխականների (ratchet variable) օգտագործման միջոցով: Արգելանիվի փոփոխականները սահմանվում են որպես առանցքային անկախ փոփոխականի (կամ երրենն հենց կախյալ փոփոխականի) մաքսիմալ արժեք նախկին ո ժամանակահատվածներում: Եթե նման փոփոխականը ուներեսին հավասարման մեջ վիճակագրորեն նշանակալի է լինում, ապա դա մեկնարանվում է որպես արգելանիվի էֆեկտի գոյություն: Օրինակ՝ Կամինը և Էրիքսոնը (1993) պարզեցին, որ գնաճի արգելանիվի փոփոխականը նշանակալի էր Արգելանինայի դոլարայնացումը բացատրելիս, մինչեղո Պեյերսը և Ուեյզը (1997) պարզեցին նշանակալի արգելանիվի էֆեկտը գնաճի մակարդակի, փոխարժեքի արժեքրկման և գնաճի տատանողականության համար Բոլիվիայում: Մոնգարդինին և Սյուլերը (1999) Նրգստանի դոլարայնացման հետազոտությունում որպես արգելանիվի փոփոխական ընդգրկել են հենց դոլարայնացման մակարդակի նախկին առավելագույն արժեքները: Նշված մոտեցումն էլ օգտագործենք ՀՀ-ի համար գնահատումներ կատարելիս:

Կարենոր է մեկնարաններ արգելանիվի կամ, որ նույնն է՝ հիստերեզիսի էֆեկտը: Բացատրություններից մեկն այն է, որ արգելանիվի փոփոխականներն արտահայտում են սպասումների ճշգրտման համար պահանջվող ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է մարդկանց՝ համոզվելու, որ ընթացիկ մակրոտնտեսական կայունությունը տևական բնույթ ունի (Պեյերս և Ուեյզ, 1997): Մեկ այլ մեկնարանությունն արգելանիվի էֆեկտն ի հայտ է գալիս ըստ այն փաստի, որ կան տրանսակցիոն ծախսեր մեկ արժույթից մյուսին անցնելիս (Գլիդրոտի և Ռոռդրիգես, 1992) կամ էլ արտարժույթով նշվող գործիքների օգտագործմանը սովորելու, ինչպես նաև այդ գործիքներին հարմարվելու հետ կապված ծախսեր (Դորնբուշ, Շոուլցենեզեր և Վուլֆ 1990: Շոուլցենեզեր, 1992 և Սյուլեր, 1994): Գործականներն, ովքեր սովորել են օգտագործել նոր գործիքը, հնարավոր է՝ չցանկանան վերադառնալ ազգային արժույթին, եթե տնտեսությունը կայունանում է, քանի որ առկա է բավարար հավանականություն, որ նրանք հետագայում ևս ստիպված կլինեն անցնելու արտարժութային գործիքների:

**ՀՀ բանկային ավանդների արժութային կազմի շարժընթացը:** Գծանկար 1-ում ներկայացված է ազգային արժույթով և արտարժույթով ավանդների հարաբերության շարժընթացը: Այդ ցուցանիշն արտահայտում է ինչպես հասարակության ընդհանուր բարեկեցությունը և բնակչության վստահության մակարդակը տվյալ ֆինանսական գործիքի նկատմամբ, այնպես էլ խնայողության միջին/սահմանային նորմի փոփոխությունը:

---

\* Հունարեն նշերի բառից, բարգմանաբար՝ «հետ ընկնող», սահմանվում է որպես մի երևոյթ, որն առաջանում է, եթե արտարժույթի տեսակարար կշռն աճում է ազգային արժույթի արժեքրկման կամ գնաճի բարձր մակարդակի ազդեցությամբ, սակայն չի նվազում (կամ կրճատվում է շատ ավելի քիչ չափով) այդ փոփոխականների հետագա կրճատման հետևանքով:



**Գծանկար 1. Ազգային արժույթով և արտարժույթով ավանդների հարաբերություն և այդ ավանդների դիմաց առաջարկվող տոկոսադրույթների տարբերություն՝**

Ինչպես երևում է գծանկար 1-ից, 1998-2001 թթ. արտարժութային ավանդների ծավալները գերազանցել են ազգային արժույթով ավանդների ծավալները՝ շնայած այն հանգամանքին, որ ազգային արժույթով ավանդների համար առաջարկվող անվանական տոկոսադրույթները նշված գրեթե ողջ ժամանակահատվածում գերազանցել են արտարժութային ավանդների համար առաջարկվող տոկոսադրույթները։ Նման վարքագիծը, հնարավոր է, պայմանավորված է եղել ազգային արժույթի արժեգրկման սպասումներով, երբ տնտեսավարող սուբյեկտները գերադասում են կարճաժամկետ հատվածում որոշակի այլընտրանքային ծախսեր կրել՝ կապված տոկոսադրույթների մեծ սարեդի հետ, քանի երկարաժամկետում ունենալ սպասվող արժեգրկումից կորուստներ։ Այսինքն՝ այս համատեքստում կարելի է ենթադրել, որ արժութային կազմը որոշելիս նախապատվությունը տրվել է դրամական միջոցի հարաբերական կայունությանը, այլ ոչ թե դրամից ակնկալվող եկամտաբերությանը։

Այնուհետև, 2002 թ. հունվարից մինչև 2008 թ. օգոստոսը, նշված ցուցանիշը դրսնորել է ամի միտում, սակայն եղել են թերևակի՝ ոչ կտրուկ տատանումներ։ 2007 թ. հունվարին, ի վերջո, ազգային արժույթով ավանդների ծավալները հավասարվել են արտարժութային ավանդներին, իսկ արդեն 2008 թ. փետրվարին 1,85 անգամ գերազանցել են դրանց ծավալները՝ գրանցելով դիտարկվող ողջ ժամանակահատվածի համար առավելագույն մակարդակ։ Ցավոր, այս միտումները չեն պահպանվել, քանի որ 2008 թ. գարնանը նկատվել են հաշվարկված ցուցանիշի գգայի տատանումներ։

2008 թ. դեկտեմբերին և 2009 թ. հունվար-փետրվարին արձանագրվել է նշված ցուցանիշի կտրուկ անկում, ինչը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում ԱՄՆ դոլարի արժևորմամբ, ինչպես նաև արժեորման սպասումների ձևավորմամբ։ Սա կարելի է

<sup>3</sup> Աղյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը. բանկային համակարգի ամփոփ ցուցանիշներ։


բացատրել այն հանգամանքով, որ ճգնաժամային պայմաններում ԱՄՆ դոլարը, լինելով միջազգային վճարամիջոց, բնակչության կողմից ընկալվում է որպես ներդրումներ կատարելու լավագույն տարբերակ, իսկ առաջացած լրացուցիչ պահանջարկը այլ արժույթների նկատմամբ դոլարի փոխանակային կուրսի վրա առաջացնում է արժեորման ճնշումներ: Հայատանյան պայմաններում նման սպասումների արդյունքում ևս նկատելի եղավ հասարակության կողմից դոլարի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճ<sup>4</sup>, բացի այդ, դրան գումարվեց նաև արտերկրից տրամսֆերտների տեսքով արտարժութային միջոցների հոսքի կտրուկ աճը<sup>5</sup>, ինչպես նաև արտարժույթի ներհոսքի մեկ այլ առբյուրի՝ արտահանման ծավալների կրճատում: Այսինքն՝ ոչ միայն մեծացավ դոլարի նկատմամբ պահանջարկը, այլև տնտեսությունում կրճատվեց դրա առաջարկը: Բնական է, որ նշված գործուների ազդեցությամբ ԱՄՆ դոլարը ՀՀ դրամի նկատմամբ նկատելիորեն արժեորվեց՝ հանգեցնելով թե՛ դոլարային ավանդների, թե՛ շրջանառությունում կանխիկ դոլարի ծավալների մեծացմանը:

Ինչ վերաբերում է ազգային արժույթով և արտարժույթով ավանդների տոկոսադրույթների սպրեդին, ապա գծանկար 1-ից երևում է, որ սկզբնական շրջանում, ցուցաբերելով մեծ տատանողականություն, այնուհետև սկսել է կայունանալ, թեև դրանով ավանդների տոկոսադրույթը շարունակել է գերազանցել արտարժութային ավանդների տոկոսադրույթը մոտավորապես 1 տոկոսային կետով: Սակայն սա կարող է լինել նաև որոշակի քաղաքականության արդյունք՝ խրախուսելու համար բանկային ավանդներում ազգային արժույթով ներդրումները: Բացի այդ, կարելի է եզրակացնել, որ ազգային արժույթով և արտարժույթով ավանդների տոկոսադրույթների սայլենի փոքրացումը վկայում է համաշխարհային տնտեսության հետ ՀՀ տնտեսության որոշակի միասնացման և ներդրումային ոփոկերի նվազեցման մասին, ինչը երկրում հաջողությամբ իրականացվող մակրոտնտեսական կայունացման գործընթացների արդյունք է:

Գծանկար 2-ում ներկայացված են գների շարժներացը և անվանական փոխարժեքը: 1995 թ. հունվարի համեմատությամբ սպառողական զամբյուղը քանի քանի 2 անգամ, իսկ անվանական փոխարժեքը, 1995-ի հունվարին միջինում լինելով 406 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց, 2009 թ. փետրվարին կազմել է 305 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց: Դրամի արժնորում չի գրանցվել դիտարկվող ողջ ժամանակահատվածում, արձանագրվել է միայն 2003 թ. վերջին ամսաներից սկսած: Մինչ այդ, սակայն, նկատվել է ԱՄՆ դոլարի արժեորում ՀՀ դրամի նկատմամբ:

<sup>4</sup> Սա կարելի է որպես սպեկուլյատիվ պահանջարկ, քանի որ մարդիկ ձեռք են բերում ԱՄՆ դոլար՝ ակնկալիքով, որ այն մոտ ապագայում պետք է արժեորվի:

<sup>5</sup> Դա պայմանավորված է միջազգային ֆինանսական ճգնաժամի (ընդգրկելով տնտեսությունների իրական հատվածները) հետևանքով արտերկիր աշխատանքի մեկնածների եկամուտների կտրուկ աճիմամբ: Ինչպես հայտնի է, նրանք իրմանականում ներգրավված են լինում առևտիք, սպասարկման և շննարարության ոլորտներում, իսկ տնտեսությունում խոր անկումները մեծապես ազդում են գործունեության հենց այդ բնագավառների վրա:



Գծանկար 2: Անվանական փոխարժեք և գների մակարդակի դինամիկա

Դրամ/դոլար փոխանակային կուրսը որոշվում է գործոնների մեջ թվաբանակով, որոնց մանրամասն դիտարկումը մեր ուսումնասիրության շրջանակից դուրս է, սակայն վերլուծության համար կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ դոլարի արժեզրկման փուլում որակապես փոխվել է դրամով և դոլարով ներդրումների կատարելու արդյունավետության պատկերը: Նախկինում՝ դրամի արժեզրկման փուլում, բնակչության ստվար հատկածի համար կարծես թե սովորույթ էր դարձել բանկային խնայողությունների գերակշիռ մասը պահել արտաքույրով և, բացի ստացվելիք տոկոսից, շահել նաև կուրսի փոփոխությունից, սակայն 2003 թվականից սկսել են փոխվել տնտեսական գործակալների սպասումները: Մասնավորապես՝ 2003-ին սկսված դրամի անվանական արժենորումը բնակչության շրջանում ապագա արժենորման սպասումներ է առաջ բերել և խրան է հանդիսացել նոր դեպոզիտներն ազգային արժույթով տեղաբաշխելու կամ նախկին դոլարային ավանդները ազգային արժույթով ավանդներով փոխարինելու համար:

**Օպտիմալ արժութային պորտֆելի ընտրության մոդելի գնահատումը**  
**ՀՀ օրինակով:** Պորտֆելի օպտիմալ արժութային կառուցվածքի փնտրման խնդրում ստացել էինք հետևյալ վերջնական հավասարումը.

$$\ln\left(\frac{D_d}{e_t D_f}\right) = \frac{1}{1-\rho} \ln\left(\frac{\alpha_1}{\alpha_2}\right) - \frac{\rho}{1-\rho} \ln\left(\frac{e_{t+j}}{e_t}\right) + \frac{\rho}{1-\rho} j \ln\left(\frac{1+i_d}{1+i_f}\right)$$

ՀՀ վիճակագրական տվյալներով հավասարումը գնահատելու նպատակով առաջարկում ենք, ստացված հավասարումը հիմք ընդունելով, անկախ փոփոխականների կազմում կատարել հետևյալ փոփոխությունը՝ ներառելով նաև հիստերեզիս երևոյթը նկարագրող փոփոխականը.

$$\ln\left(\frac{D_d}{e_t D_f}\right) = \beta_0 + \beta_1 \ln(RER_t) + \beta_2 \ln\left(\frac{1+i_d}{1+i_f}\right) + \beta_3 \ln(Ratchet_t)$$

Հավասարման գնահատման մեջ ներառված արգելանիվի փոփոխականը (ratchet variable) հաշվարկվել է որպես նախորդ ժամանակաշրջանի

դոլարայնացման առավելագույն մակարդակ<sup>6</sup> (կառուցված փոփոխականի համար ընդունվել է  $k=12$  ամիս.  $k$ -ն ցույց է տալիս տնտեսավարող սուրյեկտների հիշողության խորությունը, այսինքն՝ ինչպիսի վաղեմության իրադարձություններն են մնում նրանց հիշողության մեջ և ընթացիկ ժամանակահատվածում ազդում նրանց գործողությունների վրա).

$$Ratchet_t = \max\{Dollarization\_ratio_t, Dollarization\_ratio_{t-1}, \dots, Dollarization\_ratio_{t-k+1}\}$$

Հարկ է նշել, որ դեպոզիտների կառուցվածքը ուշացումով է արձագանքում ինչպես տոկոսադրույցների, այնպես էլ փոխարժերի փոփոխությանը: Այդ պատճառով կարելի է հավասարումներում օգտագործել տվյալ փոփոխականները համապատասխան լագերով:

Հավասարման մեջ ներառված բոլոր փոփոխականները՝ և կախյալ, նև՛ անկախ, ստացիոնար չեն եղել, սակայն առաջին կարգի ինտեգրվող են (տարբերություններով՝ ստացիոնար), այդ իսկ պատճառով գնահատման գործընթացում օգտագործվել են այդ փոփոխականների հավելածները՝ տարբերությունները: Մյուս կողմից՝ քանի որ.

$$\ln\left(\frac{1+i_d}{1+i_f}\right) \approx \ln(1+i_d - i_f) \approx i_d - i_f,$$

և, ինչպես ցույց է տվել Դիկի-Ֆուլերի ընդլայնված բեստը,  $(i_d - i_f)$  ժամանակային շարքը ստացիոնար է, ուստի ավելի ճիշտ ենք համարել  $\ln\left(\frac{1+i_d}{1+i_f}\right)$ -ի փոխարեն մոդելում ընդգրկել  $(i_d - i_f)$ -ը՝ դրամային և

արտաքույթով ավանդների տոկոսադրույցների սարեդը:



Գնահատումն իրականացվել է փոքրագույն քառակուսիների մերողի կիրառմամբ, սակայն քանի որ մոդելում անկախ փոփոխականները հանդես են գալիս իրենց լագերով, այսինքն՝ ըստ էության, գործ ունենք բաշխված լագերով մոդելների հետ, ապա գնահատման ընթացքում ծագում են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ մուլտիկուլինեարություն և անկախ փոփոխականների մեծ քանակ: Այդ խնդիրների լուծման նպատակով գնահատումն իրականացվելու է Շիրլի-Ալմոնի մեթոդաբանությամբ<sup>7</sup>, որի հիմնական ենթադրությունն այն է, որ գնահատվող գործակիցները ներկայացվում են քազմանիշամի տեսքով:

Այսպիսով՝ Շիրլի-Ալմոնի մեթոդով 2000-2009 թթ. ամսական տվյալների օգտագործմամբ EViews ծրագրային փաթերով իրականացված վերլուծության վերջնական արդյունքը ստացվել է մի շարք փորձերով՝ համարելով քազմանիշամի տարրեր կարգերը փոփոխականների ազդեցության հնարավոր լագերի հետ: Ստորև ներկայացվածը կարելի է համարել փորձարկված քազմարիվ մոդելներից լավագույն արդյունքներ ապահովողը, քանի որ մնացածներում պարամետրերի գնահատականների 0 լինելու հավանականությունը բավականին բարձր է: Պետք է նշել, սակայն, որ այս

<sup>6</sup>Տե՛ս Mongardini J. and Mueller J., Ratchet Effects in Currency Substitution: An Application to Kyrgyz Republic, IMF Working Paper, 2000:

<sup>7</sup>Տե՛ս Greene W.H. , Econometric Analysis, 4th edition, Prentice Hall, Inc., 2000:

դեպքում ևս որոշ գնահատականների համար չի մերժվել դրանց գրոյական արժեքները ընդունելու վարկածը, այնուամենայնիվ, ստացված մոդելն ապահովում է որակի ստուգման շատ չափանիշների բավարար մակարդակ:<sup>8</sup> Վերլուծական առումով հետաքրքրություն են ներկայացնում մոդելի սկզբնական գործակիցները<sup>9</sup>, որ ներկայացվում են ստորև.

Lag Distribution of $i_d - i_f$	i	Coefficient	Std. Error	T-Statistic
	0	0.96178	0.54223	1.77375
	1	0.06761	0.27634	0.24467
	2	-0.39063	0.31542	-1.23845
	3	-0.41293	0.30236	-1.36570
	4	0.00069	0.19475	0.00355
	5	0.85025	0.42720	1.99026
Sum of Lags		1.07677	0.73805	1.45894
Lag Distribution of $\Delta \ln(RER_t)$	i	Coefficient	Std. Error	T-Statistic
	0	-0.83557	0.28022	-2.98180
	1	-0.17569	0.15710	-1.11831
	2	0.18526	0.17222	1.07571
	3	0.24729	0.17178	1.43962
	4	0.01040	0.15448	0.06734
	5	-0.52541	0.27561	-1.90632
Sum of Lags		-1.09371	0.69046	-1.58403
Lag Distribution of $\Delta \ln(Ratchet_t)$	i	Coefficient	Std. Error	T-Statistic
	0	-1.28567	0.23874	-5.38513
	1	-0.64809	0.13174	-4.91946
	2	-0.01051	0.32956	-0.03190
Sum of Lags		-1.94428	0.39522	-4.91946

Այսպիսով՝ ազգային արժույթով և արտարժույթով ավանդների տոկոսադրույթների սպեկտրի և ազգային արժույթով ու արտարժույթով ավանդներում միջոցների տեղաբաշխման միջև առկա է դրական կապ, որը նաև վիճակագրորեն նշանակալի է եղել, ընդ որում, գործակցի ամենամեծ արժեքը արձանագրվել է ընթացիկ ժամանակահատվածի համար, իսկ նա-

<sup>8</sup> Մոդելը բավարարում է Գ-առև-Մարկովի պայմանները. սխալները համացրված են, կոռելյացված չեն և ունեն նորմալ բաշխում:


<sup>9</sup> Աղյուսակում յուրաքանչյուր փոփոխականին համապատասխան Sum of Lags տողում նշված գործակցի արժեքը ցույց է տալիս այդ փոփոխականի երկարաժամկետ ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա: Օրինակ՝ -1,944-ը  $\Delta \ln(Ratchet_t)$  փոփոխականի երկարաժամկետ ազդեցությունն է կախյալ փոփոխականի՝  $\Delta \ln(D_{d,t} / e_t D_{f,t})$  վրա (առաձգականությունը, քանի որ փոփոխականները մոդելում ներառված են բնական լոգարիթմներով):

խորդ ժամանակահատվածի մի մասում նշված փոփոխականների միջև նշանակալի կապ չի ստացվել: Բացի այդ, սպրենի երկարաժամկետ ազդեցությունը ևս նշանակալի չի եղել. այդ է փաստում t-չափանիշը:

Հաջորդ փոփոխականի՝  $\Delta \ln(RER_t)$  ազդեցությունը բացասական է, ինչը բնական է, քանի որ դրամի արժեքը կում հաճացեցնում է դրամից խուսափման և, որպես հետևանք, արտարժույթով ավանդների աճի: Նշանակալի են միայն տվյալ և անմիջապես նախորդ ժամանակահատվածի գործակիցները, որոնք ունեն ակնկալվող նշանները, ի տարբերություն մնացած լազերի: Բացի դրանից, փոխարժեքի փոփոխության գործակիցն ավելի մեծ է ընթացիկ, քան նախորդ ժամանակահատվածում, այսինքն՝ մարդիկ ավելի մեծ չափով են արձագանքում տվյալ ժամանակահատվածի փոփոխություններին:

Ինչպես և ակնկալվում էր, հիսուսական երևույթը նշանակալի բացարող փոփոխական է եղել ավանդների արժութային կառուցվածքը որոշելիս: Հետևապես՝ նախորդ ժամանակահատվածներում գրանցված դրամարայնացման առավելագույն մակարդակը յուրօրինակ արգելակ է հանդիսացել դրամային ավանդներ գումարներ տեղափոխելու համար անգամ, եթե դրամը արժենորվում է, կամ դրամային ավանդի տոկոսադրույթն աճում է: Այս իմաստով առկա է պահպանողական վարքագիծ, ինչը, թերևս, պայմանավորված է նրանով, որ մարդիկ ուսկի հակված չեն, որոշումներ կայացնելիս չեն դիտարկում տնտեսական համապատասխան ինդիկատորները, վստահում են միջազգային վճարամիջոցին ավելի, քան ազգային արժույթին կամ, նախկին փորձից ելնելով, սպասում են ազգային արժույթի հետագա արժեզրկման՝ ներկա արժենորումն ընկալելով սույկ որպես ժամանակավոր երևույթ: Պետք է նշել նաև, որ ստացված կապը նշանակալի է ինչպես ներկա ժամանակահատվածում, այնպես էլ նախորդ: Բացի այդ, երկարաժամկետ ազդեցությունը կամ, տվյալ դեպքում, առաձգականությունը ևս նշանակալի է եղել:

Այժմ գրաֆիկորեն համադրենք փաստացի տվյալները բանաձևով հաշվարկվածի հետ.



Ակնհայտ է, որ մոդելն այնքան էլ լավ չի ներկայացնում փաստացի ցուցանիշը՝ առավել ևս դրա կտրուկ տատանումները. դա է վկայում նաև մոդելի դետերմինացիայի գործակցի ցածր արժեքը ( $R_{adj}^2 = 0.35$ ): Չնայած

որ երկուսն էլ ունեն փոփոխաման միևնույն միտումները, այնուամենայնիվ, քանաձևով հաշվարկվածը ամբողջությամբ չի կանխատեսում թոփքների և անկումների մեծությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ դրամային և արտարժույթով ավանդներում գումարների տեղաբաշխման վրա ազդում են նաև շատ այլ գործոններ, որոնք ներառված չեն տվյալ մոդելում և, հնարավոր է՝ իրականում նման գործոններն անզամ քանակապես շափելի չեն (օրինակ՝ վատահության պակասը ազգային արժույթի՝ որպես ներդրման հուսալի միջոցի հանդեպ):

### **ARAM ARAKELYAN**

*Zav. кафедрой „Математические методы и модели в экономике“ ЕГУ,  
доктор, профессор технических наук*

### **ГАЯНЭ БАРСЕГЯН**

*Экономист Центрального банка РА  
аспирант ЕГУ*

**Выбор оптимального валютного портфеля. Оценка модели на примере Армении.**- В данной работе мы изучаем динамику банковских депозитов в Армении. Сформулирована и решена задача оптимизации валютной структуры банковских депозитов. Решая представленную проблему, получено основное соотношение, которое до процесса оценки была расширена с учетом влияния гистерезиса на структуру банковских депозитов. Оценка производится с помощью методологии Ширли-Алмона для моделей с распределенными лагами.

### **ARAM ARAKELYAN**

*Head of the Chair of „Mathematical Methods and Models in Economics“,  
Doctor in Technical Sciences, Professor*

### **GAYANE BARSEGHYAN**

*Economist of the Central Bank of the RA,  
Post-graduate at YSU*

**The Choice of Optimal Currency Portfolio. Estimation of the Model for Armenia.**- In this paper we study the dynamics of bank deposits in Armenia. For this purpose we formulate and solve a problem of optimization of currency structure of the bank deposits. Solving the presented problem, we obtain a basic relation, which before the estimation process has been extended to take into account the affect of hysteresis on bank deposits structure. The estimation is performed using Shirley-Almon methodology for the estimation of distributed lag models.